ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի «ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԹԻՎ 1 ՀՈԴՎԱԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌԵԼՈՒ ԴԵՊԻ ԵՆԹԱՍԱՀԱՐԱԿԱՆ ԱՖՐԻԿԱ ԵՎ ԻՐԱՔ» ԹԻՎ 259 ԲԱՆԱՁԵՎՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 9 ապրիլի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ Է. Հակոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2023 թվականի մայիսի 18-ի «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանա-

փակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի փետրվարի 15-ի N 202-Ա որոշմամբ հավանություն է տվել «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2023 թվականի մայիսի 18-ի «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի փետրվարի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ բանաձևը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևը (այսուհետ՝ նաև Բանաձև) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ նաև Բանկ) կառավարիչների խորհրդի կողմից ընդունվել է 2023 թվականի մայիսի 18-ին:

Բանաձևով լրացում է կատարվում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի 1-ին հոդվածում, որը ներկայում գործում է հետևյալ խմբագրությամբ. «Տնտեսական առաջընթացին և վերակառուցմանը նպաստելու մասով

Բանկի նպատակն է խրախուսել անցումը բաց շուկայական կողմնորոշմամբ տնտեսություններին և խթանել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի այն երկրներում մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները, որոնք հավատարիմ են բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության և շուկայական տնտեսության սկզբունքներին և կիրառում են այդ սկզբունքները: Նույն պայմանների պահպանմամբ Բանկի նպատակը կարող է իրականացվել նաև Մոնղոլիայում, ինչպես նաև Հարավային ու Արևելյան Միջերկրածովյան անդամ երկրներում՝ Բանկի որոշմամբ՝ Կառավարիչների առնվազն երկու երրորդի դրական քվեարկությամբ, որոնք ներկայացնում են անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն երեք չորրորդը: Հետևաբար սույն համաձայնագրում և դրա հավելվածներում «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներ», «երկրներ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայից», «ստացող երկիր (կամ երկրներ)» կամ «ստացող անդամ երկիր (կամ երկրներ)» բառերին արված ցանկացած հղում վերաբերում է Մոնղոլիային, ինչպես նաև Հարավային ու Արևելյան Միջերկրածովյան երկրներին»:

2. Բանաձևի նպատակն է Բանկի գործառնությունների աշխարհագրության աստիճանական ընդլայնումը Ենթասահարական Աֆրիկայի տարածաշրջանի սահմանափակ թվով պետությունների և Իրաքի վրա:

3. Բանաձևը կազմված է նախաբանից և երեք կետերից:

4. Բանաձևով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունը.

որպես Բանկի անդամ Բանաձևով Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրում կատարվող փոփոխության վերաբերյալ դիրքորոշում հայտնել՝ (ա) կատարելով և Բանկին ի պահ հանձնելով փաստաթուղթ, որում նշված է, որ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Բանկի անդամ, ընդունել է նշված փոփոխությունը՝ իր օրենսդրության համաձայն և (բ) ներկայացնելով ապացույցներ՝ Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ, որ փոփոխությունն ընդունվել է, և ընդունման փաստաթուղթը կազմվել և ի պահ է հանձնվել այդ անդամի օրենսդրությանը համապատասխան (կետ 2):

Ընդսմին, Բանաձևի պաշտոնական հայերեն թարգմանության և դրա բնօրինակ անգլերեն տեքստերի միջև առկա են մի շարք թարգմանչական, տեխնիկական անճշտություններ: Մասնավորապես՝ Բանաձևի նախաբանում նշված «1», «2» և «3» կետերն անգլերեն տեքստում սահմանված են որպես «(i)», «(ii)» և «(iii)», ինչպես նաև Բանաձևի 1-ին մասն ունի «ա», «բ» և «գ» կետեր, որտեղ «բ» կետի թվագրումը բացակայում է:

Այնուամենայնիվ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ թերությունները չեն կարող ազդել Բանաձևի՝ որպես Սահմանադրական դատարանի քննության առարկա միջազգային պայմանագրի կնքման իրավաչափության և դրանում ամրագրված պարտավորության սահմանադրականության գնահատման վրա:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2023 թվականի մայիսի 18-ի «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

9 ապրիլի 2024 թվականի
ՍԴՈ-1723